



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«05» օգոստոսի 2019 թվականի N:161 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2019 թվականի հունիսի 14-ի N:27-2/27-2/10007-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հունիսի 18-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին 2019 թվականի օգոստոսի 5-ից 8-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ «Մաստեր Սթայլ» ուսումնական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթացներին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը չորս օր՝ 2019 թվականի օգոստոսի 5-ից 8-ը ներառյալ:
3. Մուշեղ Մուրադյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Հարությունյանին:
4. Մուշեղ Մուրադյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն

գործողման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Իսկականի հետ ճիշտ է



Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ